ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/58

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3615-19 գրությամբ Նարեկ Հարությունյան Ա/Ձ-ին (այսուհետ՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 14.02.2019թ. գրության հիման վրա, 06.03.2019թ. Նարեկ Հարությունյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 14.02.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից 24.01.2019թ. ՀՀ ՏՄԴՀՀՄ-ԳՀԱՊՁԲ19/01 ծածկագրով հայտարարված գնանշման հարցմամբ թիվ 1 չափաբաժնով հաղթող է ճանաչվել Նարեկ Հարությունյան Ա/Ձ-ն, սակայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա հայտ ներկայացնելու օրվա 31.01.2019թ. դրությամբ վերջինս ունի ժամկետանց հարկային պարտավորություն 22.000 ՀՀ դրամ գումարի չափով:»:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՀՈԱԿ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

<u>3. Նարեկ Հարությունյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.03.2019թ. գրությամբ դիմել է Նարեկ Հարությունյան Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3615-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել ԱՁ-ի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Նարեկ Հարությունյան ԱՁ-ն:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.03.2019թ. թիվ 26/26/3615-19 գրությունը, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.02.2019թ. գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՏՄԴՀՀՄ-ԳՀԱՊՁԲ19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ՀՀ ՏՄԴՀՀՄ-ԳՀԱՊՁԲ19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 31.01.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 07.02.2019թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, 31.01.2019թ. դրությամբ ԱՁ-ի՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.02.2019թ. Նարեկ Հարությունյան ԱՁ-ին տրված թիվ 3132 տեղեկանքը, Նարեկ Հարությունյան ԱՁ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.02.2019թ. տրված եզրակացությունը.

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՏՄԴՀՀՄ-ԳՀԱՊՁԲ19/01 ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Նարեկ Հարությունյան ԱՁ-ն:

Նարեկ Հարությունյան ԱՁ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար առաջարկված գնային առաջարկը կազմել է 805.000 ՀՀ դրամ:

Նարեկ Հարությունյան ԱՁ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՏՄԴՀՀՄ-ԳՀԱՊՁԲ19/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 31.01.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.5 կետով որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Նարեկ Հարությունյան ԱՁ-ին:

Հանձնաժողովը 07.02.2019թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 2.1 կետով արձանագրել է, որ 31.01.2019թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.02.2019թ. տրամադրած եզրացության համաձայն՝ Նարեկ Հարությունյան ԱՁ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 22.000 ՀՀ դրամ գումարի չափով:

- Նույն արձանագրության 3-րդ կետով որոշել է Նարեկ Հարությունյան ԱՁ-ի հետ պայմանագիր չկնքել:

Նարեկ Հարությունյան ԱՁ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է 31.01.2019թ. դրությամբ ԱՁ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ ԱՁ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.02.2019թ. Նարեկ Հարությունյան ԱՁ-ին տրված թիվ 3132 տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՏՄԴՀՀՄ-ԳՀԱՊՁԲ19/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի՝

- 8.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի

պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 8.14 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 8.19 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.02.2019թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ Նարեկ Հարությունյան ԱՁ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (31.01.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 22.000 ՀՀ դրամ:

- Նարեկ Հարությունյան ԱՁ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- Նարեկ Հարությունյան ԱՁ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ Նարեկ Հարությունյան ԱՁ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (31.01.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում Նարեկ Հարությունյան ԱՁ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել ԱՁ-ի իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ ԱՁ-ն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար Նարեկ Հարությունյան ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3615-19 գրությամբ Նարեկ Հարությունյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ